

## ԱՄՈՒՄՆԱՅՈՂ, ԶՈՅԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Իբր հայ բժիշկ, յաճախ պատեհուութիւնը ունեցած եմ բժշկական քննութիւն կատարելու, պատկուելը որոշուած ամուսնացող զոյգերուն. ուստի սոյն հարցին՝ «Բուժանք»ի էջերուն մէջ ստացած այժմէութեան առթիւ, համարձակութիւն կ'ստանամ իմ խոնարհ կարծիքս լայանելու:

Անա թէ ինչ պարագաներու տակ կը ներկայանայ այդ այնքան կենսական հարցը: Շատոնց աղջիկն ու տղան նշանուած՝ ու յաճախ սիրահարուած են: Ամէն կարգի պատրաստութիւն տեսնուած է, հարսնիքը տեղի պիտի ունենայ Կիրակի Օր մը առաջ, շաբաթ առտուն, փեսային զգացնել կը տրուի թէ պէտք է բժշկական վկայագիր մը առնել, առանց որոյ ո՛չ թաղականութիւնը պատկուութիւն կրնայ տալ և ո՛չ քահանան կարող է ամուսնութեան կրօնական ձեւակերպութիւնը կատարել: Ըստ որում փեսան ստիպուած՝ կը դիմէ իր ծանօթ բժիշկին:

— Տօքթէօս, ուրբոյ մը կուտա՞ս:

— Ի՞նչ ուրբոյ:

— Վաղը պիտի պատկուիմ, չի լսեցի՞ր. ամա՛ն, խնդրեմ շուտ բրէ, ուրիշ գործեր ալ ունիմ. արդէն գիտես, ես առողջ եմ, աղջիկն ալ տեսնելու պէտք չկայ, ամէն կերպով առողջ է. բայց ֆուսս չունի, ատէդ եէրինէ վարսըն, բան մը գրէ, վարձքը ինչ որ է կը վճարեմ:

Իննսուն առ հարիւր, ճիշդ այս ձեւով կը ներկայանան խնդրոյ առարկայ՝ քննութեան պարագաները: Բժիշկը կ'անճրկի:

— Բարեկա՛մ, կ'ըսէ, ես առանց քննութեան բժշկական վկայագիր չեմ կրնար գրել, դնա նշանածդ ալ բեր, երկուքդ ալ քննեմ:

Դժկամակութեամբ կ'ընդունուի բժիշկին յանձնարարութիւնը և քննութիւնը տեղի կ'ունենայ . . . : Բարեբախտաբար զոյգերը ընդհանրապէս ամուսնութեան արգելիչ լուրջ ախտավիճակ չեն ունենար:

Եւ սակայն խնդիրը բոլորովին կը բարդանայ, եթէ տղան կամ աղջիկը ներկայացնեն հիւանդութեան կամ տկարութեան պարագայ մը: Այն ատեն, քննութիւնը կատարուելէն վերջ բժիշկը վարանոտ վիճակ մը կ'ստանայ, երիտասարդը կը նշմարէ . . .

— Բայց, Տօքթէօս, պատկը չէ կարելի յետաձգել, ի՞նչ կ'ըսեն լըսողները, մեծ ամօթ կ'ըլլայ, և այլն:

— Բայց բարեկամ . . .

— Դուն գիտես, կ'ըսէ փեսացուն սրտնեղած, ես կարող եմ ուրիշ բժիշկէ մը առնել վկայագիրը. բայց քեզ սիրելուս և ճանչնալուս համար, քեզի գիմեցի:

— Բայց ձեր ազգայ կողակիցը, սրտի հիւանդութիւն ունի — կամ — զուք թոքերու տկարութիւն ունիք — կամ — ձեր այնինչ հիւանդութիւնը տակաւին բաւարար դարմանումի չէ ենթարկուած ևն. ևն. . . .

Մտիկ ընողը ո՞վ: Ու առանց գիտութեան կամքին, պսակը կ'ըլլայ ընդհանրապէս իր ցաւալի հետեւանքներով:

Ընթերցողը ինծի հետ արդէն կ'ընդնշմարէ սոյն օրինական ձեւակերպութեան բոլոր պակասաւորութիւններն ու անպատեհութիւնները, զորս կարելի է ամփոփել հետեւեալ կերպով: Ա. ամուսնացողները բժշկական քննութեան անհրաժեշտութիւնը չեն հասկցած: Բ. ծնողներ և ազգ. իշխանութիւններ օրինական պարզ ձեւակերպութիւն մը կը նկատեն զայն և ըստ այնմ կը վերաբերուին: Գ. բժիշկին ոչ ժամանակ և ոչ միջոց կը տրուի, այդ քննութիւնը պաղարիւնութեամբ և գիտական տուեալներու համեմատ կատարելու: Դ. այդ քննութիւնը կը պահանջուի վերջին պահուն միայն, այնպէս որ աննպաստ եղած պարագային թէ՛ բժիշկը, թէ՛ ամուսնացողները և թէ՛ շահագրգռող կողմերը կը մատնուին տեսակ մը անել կացութեան և այն ատեն տեղի կ'ունենայ ակամայ ու հապճեպ կարգադրութիւններ ուր գիտութեան ձայնը կը մնայ անլսելի:

Նախ քան ամուսնութիւն, երկու սեռի անհատներ պէտք է ըստանան որոշ չափով զարգացում, դաստիարակութիւն, ամուսնական կեանքի ընկերային եւ առողջապահական պայմաններու մասին: Ամուսնանալէ առաջ, պատկան մարմինները, որոնք իշխանութիւն ունին արտօնութիւն տալու, պիտի պահանջեն ո՛չ թէ միայն առողջութեան՝ այլ ամուսնական կեանքի մասին ակնարկուած զարգացումի վկայագիր: Կը նշանակէ որ մարդիկ դէպի ամուսնական կեանք պիտի դիմեն պատրաստուած եւ գիտակցութեամբ:

Միտիլլի

ԲԺ. Ն. ՏԷՅՐՄԷՆՅԵԱՆ

**ԻՍՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԲԱՍԻՔՆԵՐԸ**

Ինքնաշարժը, անտարակոյս, գեղեցիկ եւ Թանկագին հնարք մըն է եւ օրէ օր կը կատարելագործուի ու կը յառաջդիմէ ի վնաս... հետիոտն քացողին: Հաշիւ եղած է որ մինչ 1900 — 1910 շրջանին՝ մէկ տարուան մէջ 1000 հոգիի վրայ մէկ մարդ ինքնաշարժի տակ կը ճգմուէր, 1922ին հազարի վրայ 12 մարդ ճգմուած է, իսկ անցեալ տարի, ընդամէնը 1500 մարդ մեռած են, առանց հաշուելու հաշմանդամները: Ներկայիս կրիբէն վերջ ամէնէն շատ մահացնող ճիւղանդութիւնը՝ ինքնաշարժն է: